

պէտք է ըլլալ՝ եւ ոչ Եսայի Առաջին, որ
գահակալած է 1133—1152 (?)

Ուրիշ յիշատակարանի մը համեմատ «ի
թուին փրկչին 1391 ի հայրապետութեան Տէր-
Թէոփորոսի ոմն վաճառական Կոչման (Կոչման ? , Կոման ?)
անուն Կաֆայէ եկեալ ի Կ. պոլիս, որ էր ընդ
իշխանութեամբ Յունաց, հրաման տուեալ շինելոյ .
ղեկեղեցի մի ի Ղալաթիա, կոչելով զանունն Սուրբ
Լուսինի. եւ շինարար Ս. Խաչին Աւետոմն
դարբին շինեաց»¹ :

Այս յիշատակարանը անտարակոյս, շատ
ձիշդ է, որովհետեւ 1391 թուականը, կը
համաձայնի Թէոփորոս Բ. Կաթողիկոսի եւ Եսայի
Բ. պատրիարքի թուականներուն, մինչ 1436 ը, ոչ
Թէոփորոս Բ. ի եւ ոչ ալ Եսայի Բ. ի թուա-
կանները կը շոշափէ :

Ուրիշ տարբերութիւն մը, արձանագրու-
թեան եւ յիշատակարանին մէջ՝ Եսայի պատ-
րիարքին անունն է :

Թէոփորոս Կաթողիկոս հաւասարապէս կը
յիշուի երկուքին մէջ ալ. իսկ Եսային՝ մի միայն
արձանագրութեան մէջ :

Երուսաղէմի պատրիարքաց ցանկին մէջ,
սակայն, կայ Եսայի մը՝ Երբուրդ, որ գահակալած
է 1430 - 1441² :

Եսայիներու շփոթութիւն մը կրնայ տեղի
ունեցած ըլլալ : Հաւանաբար այդպիսի շփո-
թութիւն մ'եղած պիտի ըլլայ, շատ ետքը, ոչ
թէ Եկեղեցւոյն շինութեան ատենը, այլ՝ ար-
ձանագրութեան գրութեան ատենը՝ 1733 ին,
որովհետեւ արդի արձանագրութիւնը 1733 թուա-
կանը կը կրէ. այսինքն՝ Կոլոտի թուականը :

¹ Այս յիշատակարանը կը գտնուի 1769ին գրուած
ձեռագիր տետրակի մը մէջ, որ այլ եւ այլ կցկոտուր յիշա-
տակութիւններու հաւաքածոյ մըն է :

² Յաջորդութիւն Պատրիարքացն Երուսաղէմի էջ 48 :